

Անդերսընի «Հէֆիաթները» (կաղանդի նուէր հայ երեխաներին), հեղինակի պատկերով և կենսադրութեամբ, Թարգմանեց Փրանսերէնից Տ. Զաւէն. Թիֆլիս, 1904, դինն է 50 կողմ:

Պ. Հ. Առաքելեանի հրատարակութեամբ վերջերս սկսել են լոյս տեսնել մի շարք գրքոյկներ՝ «Հանրամատչելի գրադարան» ընդհանուր վերնագրով:

Դանիացի նշանաւոր գրող Անդէրսընի «Հէֆիաթները» կազմում են այդ գրադարանի առաջին №-ը: Փոքրիկ, սիրուն պատմուածքներ—թւով ինն հատ,—նրանք կարող են շատ հետաքրքրական լինել մեր մանուկների համար, որոնք, դժբախտաբար, վերջին տարիների ընթացքում շատ քիչ բան են ստանում ընթերցանութեան համար: Թարգմանութեան լեզուն պարզ է, կանոնաւոր և մանուկների համար մատչելի: Գրքոյկի մէջ կան նաև պատկերներ: Յանկալի էր, որ այս վերջինները աւելի աշողուած լինէին:

Ա. Մ.

«Քերեկա», գրոյց Բ. Խոսեմսիու. Թարգմ. Ա. Դո-ի, Պետերբուրգ, 1903 թ., դինն է 3 կողմ:

Հրէական կեանքէ վերցուած դեղեցիկ պատմուածք մըն է Քերեկան: Պատմուածքին նիւթը՝ այդ բազմաշարճար, պարիա ժողովուրդի երկար մարտիրոսագրութեան մէկ դրուագն է, որոնց նման անցքերով լեցուն է, դժբախտաբար, թրքահայ մոայլ իրականութիւնը՝ նոյնիսկ մեր օրերուն մէջ: Ընտրութիւնը լաւ է:

«Շահադէ և Փէրիխանում», գրեց Ա. Փ., 1903 թ., Թիֆլիս.. դինն է 30 կ.:

Շահադէ և Փէրիխանումի նման հէքիաթներ ամեն երեխայ լսած է իր տատերէն ու պառաւ դայեակներէն, և որոնք՝ անխուսափելի կերպով կը վերջանան ճարանք հասան իրենց մուրադին, դուք էլ հասնէք ձեր մուրադին» պայմանդրական խօսքերով.— գոնէ այդ անմիտ ու ուամիկ հէքիաթը գրուած ըլլար քիչ ու շատ գրական ոճով... Բացէք որեւէ էջը և կը հանդիպէք այսպէս անվերջ նախադասութիւնների. «Երբ Շահադէն Փէրիխանումից այս տեսակ սիրտ կտրատող խօսքերը լսեց և ինքն էլ անձամբ ակնատես եղաւ նրա տխրութեանն ու լացին, այս անգամ իւր

անհուն սիրոյ կրակը աւելի ու աւելի բորբոքուելով իւր սրտում,
նորից փաթաթուեց Փէրիխանումին ու ամուր գրկելով կրծքին,
սկսեց շարունակաբար համբուրել աչքերից ու...»

Գուցէ ոմանք առարկեն, որ քննադատութիւնը պէտք է
մոռացութեան տայ, արհամարհէ այդ տեսակ արտադրութիւն-
ները: Լաւ, բայց որ հրապարակ ելլող գործերու հարիւրէն ին-
նըսունը այս կարգի տխուր աշխատութիւններ են, որ այդ
Շահգադէ և Փէրիխանումները մասնաւոր, պատահական դէպ-
քեր չեն, այլ ուշադրաւ, յատկանշական, տրտում երևոյթներ
— այս պարագային ի՞նչպէս լռել, Վերջապէս բաւական է որ-
չափ քաջալերեցին մեր հրատարակիչները թեթեւ ու անբովան-
դակ գրականութիւնը:

ԶԱԻՆ

«Ազգագրական Համեղիսի» I-X դրերը *):

4. Ծնունդ եւ Մկրտութիւն.—Պ. Լալայեանի բացատրու-
թիւնները մեծ մասամբ անաջող են: Ահա օրինակներ.—1) Ե-
րեխի և ծննդկանի «կոխուել» նախապաշարումը նա բացա-
տրում է այսպէս, թէ դա նշանակում է՝ «հետզհետէ նիհարել
և մեռնել»: «Կոխուել» կամ «սատանակոխ լինելն» արդէն բա-
ցատրել ենք: Նախապէս երեխան պիտի «կոխուի», չարքի պա-
տահի (պատճառ), որպէսզի հիւանդանայ, նիհարի և ապա մեռ-
նի (հետեանքներ): 2) Երեք տարբեր հասկացողութիւններ, որ
իրար հետ ոչ մի առնչութիւն չունին, բերել խառնել է իրար.
օրօրոցախեղդ կամ ծծով ընկնել, օրօրոցակոխ և օրօրոցա-
կեօղ (օրօրոց գողացող, օրօցքի գող)**): Ահա դրանց բացատր-
ութիւնը.—Երբ մայրը գիշերն երեխին ծիծ տալիս հէնց այն-
պէս էլ վրայ ընկած քնում է, յաճախ պատահում է, որ երե-
խան խեղդում է, այս դէպքում ասում են, որ երեխան օրօց-
քախեղդ է եղել, ծծով է ընկել. սա որեւէ նախապաշարման հետ
կապ չունի: Երբ անհասկանալի պատճառով երեխան հիւանդա-
նում, ճլերք է ընկնում, կամ ուշաթափում, կապուտկում է
կայն, նախապաշարուած և սնտոխապաշտ մարդը ոչ մի այլ ելք
չգտնելով երեխի հիւանդութիւնը բացատրելու, այդ բոլորը
վերագրում է գերբնական ուժերի, աներևոյթ չար ոգիների,
չարքերի, դեերի, սատանաների, և ասում, որ նրանք ոտնա-
հարել, կոխել, դիպել են երեխին: Ահա սա կոչում է (հաղա-

*) ՑՏՍ «Մուրճ», № 2.

**) II դիրք. 224 երես. և VI դիրք 315 երես: